



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 5 «25» 02 2015 թ.

Համալսարանի գիտական խորհուրդը, լսելով և քննարկելով կլինիկական աշխատանքների գծով պրոֆեսոր, պրոֆեսոր Ա.Մ.Մինասյանի կլինիկական աշխատանքների մասին հաշվետվությունը.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համալսարանի կլինիկական աշխատանքները գնահատել բավարար:
2. Ընդլայնել բժշկական ապահովագրական ծառայությունից օգտվող ԵՊԲՀ աշխատակիցների կազմը:
3. Կազմակերպել «Որոֆեսորական պոլիկլինիկայի» արտագնա այցելություններ ՀՀ մարզեր և ԼՂՀ:
4. Ընդլայնել սրտաբանական կլինիկայում պերիֆերիկ զարկերակների հիվանդությունների էնդովասկուլյար միջամտությունների ծառայությունը:
5. Վերանորոգել և արդիականացնել համալսարանական կլինիկական պաթոլոգիայի լաբորատորիան, ստեղծել միջազգային համագործակցության կապեր՝ ապագայում ռեֆերենս-լաբորատորիայի կարգավիճակ ստանալու նպատակով:
6. ԱՄՆ-ի Փենսիլվանիայի Նահանգի Թոմաս Ջեֆերսոնի համալսարանի ռադիոլոգիայի ինստիտուտի հետ համատեղ ստեղծել ռադիոլոգիայի դպրոց (կենտրոն):
7. Համալսարանական հիվանդանոցներում ստեղծել արյան փոխներարկման ծառայություն:
8. Համալսարանական հիվանդանոցների վճարովի հերթափոխային աշխատանքներում ակտիվացնել կլինիկական օրդինատորների մասնակցությունը:
9. Ստեղծել հնարավորություն «Հերացի» ավագ դպրոցի աշակերտների համար համալսարանական հիվանդանոցային աշխատանքներին մասնակցելու ապագա մասնագիտության հարցում կողմնորոշվելու նպատակով:
10. Ընդլայնել սիմուլյացիոն կենտրոնում ուսուցանվող պրակտիկ բժիշկների, տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների և պաշտպանության նախարարության աշխատակիցների շրջանակները:
11. Հանրային առողջության և առողջապահության ամբիոնի պրոֆեսոր Ա. Է. Թադևոսյանին շնորհել պրոֆեսորի, հոգեբուժության ամբիոնի դոցենտ Կ. Կ. Թաթարյանին դոցենտի գիտական կոչումներ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ-ի հաստատմանը:
12. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր Մ.Ջ.Նարիմանյանին:

Նախագահ՝

Գլխորարտուղար՝

պրոֆ. Մ. Ջ. Նարիմանյան

պրոֆ. Տ. Գ. Ավագյան